ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2017 թվական, հուլիսի 26, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության գործադիր տնօրեն

33792-17

11 08 17

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ և Հանձնաժողովի անդամների փոխարեն նիստին մասնակցող անձինք՝

Ալբերտ Բաբայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տիգրան Խաչատրյանի մշտական փոխարինող)
Ժորա Ասատրյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու (ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Դավիթ Անանյանի մշտական փոխարինող)
Անահիտ Անտոնյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ապահովման վարչության պետ (ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Սուրեն Քրմոյանի փոխարեն)
Արայիկ Մկրտչյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության աշխատանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության բաժնի պետ (ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տ. Սահակյանի փոխարեն)

Հրավիրվածներ՝

Ժորա Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Աստղիկ Մինասյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ
Սիրանուշ Զաքարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ
Միքայել Փիլիպոսյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ

Օրակարգի նախագծի վերաբերյալ Հանձնաժողովի անդամ Գ. Մակարյանի կողմից առաջակվեց փոխել հարցերի հերթականությունը՝ Օրակարգի նախագծի 4-րդ հարցը տեղափոխել 2-րդ հարց:

Ներկայացված առաջարկության վերաբերյալ առարկություններ չներկայացվեցին և օրակարգն հաստատվեց հարցերի հետևյալ հերթականությամբ.

1. **«Սոցիալական աշխատանքի մասին» և ««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում և քննարկում:**
2. **Այլ հարցեր.**
   - Հաղորդագրություն ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի ընթացքի մասին.
   - Հաղորդագրություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների ընթացքի մասին:

3. **ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2016 թվականին աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:**
4. **Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության՝ Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը որպես Հանրային ծառայողի օր ընդունելու առաջարկի քննարկում:**

1. «Սոցիալական աշխատանքի մասին» և ««Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում և քննարկում:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ Ա. Մինասյանը: Նշվեց, որ «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Օրենքի նախագիծ) ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը ներառված է ՀՀ կառավարության 2017թ. գործունեության միջոցառումների ծրագրում: Նախագիծը արդեն դրված է շրջանառության և կարծիքի է ներկայացվել շուրջ 15 մարմիններ, այդ թվում՝ Հայաստանի գործատուների հանրապետական միություն և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա:

Ա. Մինասյանի կողմից ներկայացվեց Օրենքի նախագծի առարկան և նպատակը, կարգավորման ենթակա հարաբերությունների շրջանակը: Մասնավորապես նշվեց.

Հայաստանի Հանրապետության, որպես սոցիալական պետության, սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը որակյալ աշխատուժի ապահովումն է: Այս խնդիրը հատկապես կարևորվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիների հետ աշխատող մասնագետների պարագայում, ինչպիսին սոցիալական աշխատանքի մասնագետներն են: Սոցիալական աշխատանքի մասնագետները աշխատողների այն խումբն են, որոնց պարագայում պրոֆեսիոնալիզմը ոչ թե ուղղակի ցանկալի է, այլ պարտադիր:

Նշվեց, որ ՀՀ-ի 6 տարբեր ԲՈՒՀ-եր ներկայումս պատրաստում են սոցիալական աշխատանքի մասնագետներ:

Ներկայացվեցին Օրենքի նախագծով սոցիալական աշխատողի համար տրվող իրավունքներն ու պարտականությունները, սոցիալական աշխատանքի մասնագետների պալատի հասկացությունը, պալատի խնդիրները, լիազորությունները, գործառույթները, պալատի մարմինները, պալատի ընդհանուր ժողովի գումարման կարգը, վերջինիս լիազորությունները, պալատի ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրները:

Միաժամանակ նշվեց, որ Օրենքի նախագծով կարգավորվում են նաև սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման տրամադրման և անցկացման կարգը, սոցիալական աշխատողներին և սոցիալական սատարողներին արտոնագրերի տրամադրման, սոցիալական աշխատանքի մասնագետների վերապատրաստման հետ կապված հարաբերությունները:

Ամփոփելով Օրենքի նախագծի ներկայացումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը տեղեկացրեց, որ նման նախագիծ մշակելու օրենսդրական նախաձեռնությունը Սոցիալական աշխատողների ասոցիացիայինն է, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որպես ոլորտի կարգավորման պետական կառավարման մարմին ընդունել է այդ նախաձեռնությունը և ընթացք տվել դրան: Նախարարը միաժամանակ առաջարկեց ներկաներին ներկայացնել իրենց դիտարկումներն ու հարցադրումները, որոնք կքննարկվեն և ըստ դրանց ևս Օրենքի նախագիծը կլրամշակվի:

Օրենքի նախագծի վերաբերյալ ներկաների կողմից զեկուցողին տրվեցին հետևյալ հարցերը.

1. Գ. Մակարյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը և ներկայացվեցին հետևյալ առաջարկությունները.
   1.1. Սոցիալական աշխատանք մասնագիտությամբ ԲՈՒՀ-երի առաջին շրջանավարտները երբ են ավարտել:
   1.2. Կա արդյոք գնահատական, թե այդ մասնագետների ինչ պահանջարկ կա:
   1.3. Կարևորելով Օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարությունների կարծիքները՝ Գ. Մակարյանն առաջարկեց լրամշակումից հետո այն մեկ անգամ ևս քննարկել սոցիալական գործընկերների հետ՝ քննարկմանը մասնակից դարձնելով նաև ՀՀ առողջապահության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների ներկայացուցիչներին: Գ. Մակարյանն առաջարկեց ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստանալ «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագիրը:

2. Ժ. Թորոսյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը և հնչեցվեցին հետևյալ դիտարկումները.
   2.1. Ուսումնասիրված է արդյոք այն հարցը, թե քանի մարդ ունի նման մասնագետի աշխատանքի կարիքը, որպեսզի պարզ դառնա, թե մոտավորապես քանի մարդու համար է ընդունվում օրենքը:
   2.2. Օրենքի նախագծում շատ են տարբեր լեզուներով օգտագործված տերմինները և առկա է դրանք հայերեն դարձնելու խնդիր: Միաժամանակ Օրենքի նախագծի որոշ հոդվածներում էլ առկա է նաև այն խնդիրը, որ թեև բառերը հայերեն են, սակայն դարձյալ առկա է դրանք հստակեցնելու անհրաժեշտություն: Նշվեց նաև, որ Օրենքի նախագծում օգտագործվող որոշ հասկացություններ իմաստով չեն համապատասխանում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքին: Մասնավորապես, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողն ու սոցիալական սպասարկողը, իսկ ներկայացված Օրենքի նախագծում խոսք է գնում նաև սոցիալական սատարողի մասին: Ժ. Թորոսյանի կարծիքով Օրենքի նախագծում առավելապես պետք է կարևորվեին և առավել մանրամասն ներկայացվեին սոցիալական աշխատանքի մասնագետների պալատին վերաբերող հարցերը: Օրինակ՝ ով է պալատի անդամ, սոցիալական աշխատանքի բոլոր մասնագետները արդյոք պետք է լինեն պալատի անդամներ, թե ոչ և այլն:

2.3. Անդրադառնալով Օրենքի նախագծով ամրագրված այն կարգավորմանը, համաձայն որի սոցիալական աշխատանքի մասնագետների պալատի ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ժողովին ներկա է պալատի անդամների մեկ երրորդից ավելին, Ժ. Թորոսյանը նշեց, որ նման կարգավորումն անընդունելի է, քանի որ հնարավորություն է ստեղծվում որոշումներ կայացնել փոքրամասնության կողմից: Անհրաժեշտ է որպեսզի ապահովվի պալատի անդամների կեսից ավելիի ներկայությունը՝ պալատի ընդհանուր ժողովը իրավազոր համարելու համար:

2.4. Հաշվի առնելով Օրենքի նախագծով կարգավորվող հարաբերությունների շրջանակի առնչությունը կրթության և գիտության և առողջապահության ոլորտների հետ, Ժ. Թորոսյանի կողմից ևս նշվեց, որ իր կարծիքով անհրաժեշտ էր, որպեսզի նիստում Օրենքի նախագծի քննարկմանը հրավիրված լինեին նաև ՀՀ կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարությունների համապատասխան մասնագետները:

2.5. Ուսումնասիրվել է արդյոք միջազգային փորձը:

3. Շ. Մկրտչյանի կողմից բարձրացված հարցը վերաբերում էր պալատի մարմինների անդամների լիազորությունների ժամկետներին: Մասնավորապես նշվեց, որ պալատի վերահսկիչ հանձնաժողովի անդամները, համաձայն Օրենքի նախագծի, ընտրվում են 3 տարի ժամկետով, իսկ պալատի մյուս մարմինների անդամները՝ 4 տարի ժամկետով: Շ. Մկրտչյանի կարծիքով անհրաժեշտ է բոլորի համար սահմանել մեկ ժամկետ:

4. Հանձնաժողովի անդամ Ա. Ասատրյանի կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

4.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, օրինակ մանկատների աշխատողները համարվելու են արդյոք սոցիալական աշխատողներ:

4.2. Քննարկվող օրենքի ընդունումից հետո արդյոք սոցիալական աշխատանքի մասնագետ հանդիսացող աշխատողները պարտադիր պետք է դառնան պալատի անդամ թե ոչ, պալատին անդամավճարներ վճարեն, արտոնագիր ստանալը, պարտադիր է, թե, ոչ: Ա. Ասատրյանի կարծիքով օրենքի ընդունումը կխոչընդոտի օրենքի կարգավորումների դաշտում ընդգրկվող աշխատողների՝ արհեստակցական միությունների անդամակցության հարցին:

Վերևում բարձրացված հարցերին տրվեցին հետևյալ պատասխանները.

1. Գ. Մակարյանի կողմից բարձրացված հարցերի և առաջարկության վերաբերյալ նշվեց.

1.1. 1-ին վեցամսյա դասընթացը կազմակերպվել է 1994թ.: Երևանի պետական համալսարանի 1-ին շրջանավարտները եղել են 2002թ.:

1.2. Սոցիալական աշխատանքի մասնագետների պահանջարկը բավականին մեծ է, եթե նույնիսկ դիտարկվի միայն պետական ոլորտը: Սոցիալական աջակցության տարածքային կենտրոններում նման մասնագետների պահանջ ունեցող աշխատատեղերի թիվը շուրջ 517 է, որոնցից միայն 4% ունեն սոցիալական աշխատողի մասնագիտություն: Մյուս կողմից, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով արդեն կա համապատասխան պահանջ, որ 5000 և ավելի բնակչություն ունեցող համայնքները պետք է ունենան սոցիալական

աշխատողներ: Այսինքն, սոցիալական աշխատողների պահանջարկը միայն պետական ոլորտում առաջիկա 1-2 տարիների ընթացքում շուրջ 200-ով կավելանա:

1.3. ՀՀ կրթության և գիտության նախարարությունից «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագիրն ստանալուց հետո այն կտրամադրվի սոցիալական գործընկերներին:

2. Ժ. Թորոսյանի կողմից ներկայացված հարցերի ու դիտարկումների վերաբերյալ տեղեկացվեց.

2.1. Սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից ծառայությունները տրամադրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց: Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ նման ծառայությունների կարիք ունեցող անձինք կազմում են բնակչության մոտ 45%-ը:

2.2. Օրենքի նախագծում օգտագործվող տերմինները հստակեցնելու հետ կապված Ա. Մինասյանի կողմից նշվեց, որ դրանք կվերանայվեն, իսկ Օրենքի նախագծի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հասկացությունների մեջ եղած անհամապատասխանությունների հարցի վերաբերյալ տեղեկացվեց, որ Օրենքի նախագծով առաջարկվող հասկացություններին համապատասխան՝ միաժամանակ փաթեթում ներառված է նաև «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների նախագիծը:

2.3. Սոցիալական աշխատանքի մասնագետների պալատի ընդհանուր ժողովի իրավազոր համարվելու համար մասնակիցների թիվը հստակեցնելու վերաբերյալ Ա. Մինասյանի կողմից նշվեց, որ այդ հարցը մեկ անգամ ևս կքննարկվի:

2.4. Տեղեկացվեց, որ Օրենքի նախագիծը կարծիքի է ներկայացվել նաև ՀՀ կրթության և գիտության և ՀՀ առողջապահության նախարարություններ:

2.5. Տեղեկացվեց, որ Օրենքի նախագծի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է առավելապես արևելյան եվրոպայի (Սլովենիա, Ռումինիա) երկրների փորձը: 2016թ. այցելություն է կազմակերպվել այդ երկրներ: Այցելությանը մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, ՀՀ ԱԺ առողջապահական հարցերի մշտական հանձնաժողովի 2016թ. նախագահ Ա. Բաբլոյանը, ՀՀ ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի 2016թ. նախագահ Հ. Հակոբյանը:

3. Շ. Մկրտչյանի կողմից բարձրացված հարցի վերաբերյալ Ա. Մինասյանի կողմից նշվեց, որ այն լրացուցիչ կքննարկվի և կտրամադրվի անհրաժեշտ պարզաբանում:

4. Հանձնաժողովի անդամ Ա. Ասատրյանի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ նշվեց.

4.1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ներում այսօր աշխատում են տարբեր մասնագետներ՝ սոցիալական մանկավարժներ, հոգեբաններ, արատաբան, հատուկ մանկավարժ, ինչպես նաև սոցիալական աշխատողներ: Այս մասով նաև նշվեց, որ պետք չէ սոցիալական աշխատանքը հավասարեցնել կամ համեմատել կենցաղային սպասարկման ծառայությունների հետ:

4.2. Սոցիալական աշխատանքի մասնագետների արտոնագիր ստանալու ճանապարհը գնում է պալատի անդամ դառնալու դիմումի հետ զուգահեռ: Հանձնաժողովի անդամ Ա. Ասատրյանի կողմից բարձրացված երկրորդ հարցի շրջանակներում հնչած մտահոգության առնչությամբ Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի կողմից միաժամանակ նշվեց, որ արհեստակցական միություններին անդամակցելը հիմնված է աշխատողի ազատ կամքի և սեփական ցանկության վրա և որևէ մեկին չի կարող դա պարտադրվել:

Ամփոփելով Օրենքի նախագծի շուրջ ծավալված քննարկումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանն առաջարկեց ներկայացված դիտարկումներն ու բարձրացված հարցերը քննարկել, ըստ անհրաժեշտության լրամշակել Օրենքի նախագիծը, գործընկերներին տրամադրել Օրենքի նախագծին վերաբերող նյութերի ամբողջական փաթեթը, այդ թվում՝ միջազգային փորձի վերաբերյալ տեղեկանքը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանն առաջարկեց շահագրգիռ մարմիններից ստացված կարծիքների հիման վրա լրամշակելուց և Օրենքի նախագծի փաթեթն ամբողջությամբ շահագրգիռ մարմինների կարծիքների հիման վրա կազմված ամփոփաթերթի հետ միասին սոցիալական գործընկերներին տրամադրելուց հետո՝ մեկ անգամ ևս այն քննարկել սոցիալական գործընկերների մասնակցությամբ:

Հանձնաժողովի Նախագահի առաջարկությունն ընդունվեց նիստի մասնակիցների կողմից:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

1.1. «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունել ի գիտություն և նախագծի լրամշակված տարբերակը մեկ անգամ ևս քննարկել սոցիալական գործընկերների մասնակցությամբ:

2. Այլ հարցեր.

- Հաղորդագրություն ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի ընթացքի մասին.
- Հաղորդագրություն ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների ընթացքի մասին:

Օրակարգի երկրորդ հարցի 1-ին կետի վերաբերյալ Գ. Մակարյանի կողմից նշվեց, որ սոցիալական գործընկերների կողմից իրականացվել է բավականին ծավալուն աշխատանք ԱՄԿ-Հայաստան համագործակցության «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի մշակման ուղղությամբ, որի արդյունքները քննարկվել են 27.06.2017թ. ԱՄԿ-ի կողմից կազմակերպված «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի մշակման սեմինարի ընթացքում: Վերջինս միաժամանակ առաջարկեց հնարավորինս արագացնել ծրագրի նախագծի մշակման հետագա ընթացքը՝ հաշվի առնելով, որ ԱՄԿ-ի կողմից դրված են ժամկետներ ծրագրի ներկայացման հետ կապված:

Օրակարգի 2-րդ հարցի 1-ին կետի շրջանակներում Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանի կողմից տեղեկացվեց, որ սոցիալական գործընկերների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբի կողմից մշակվել են ԱՄԿ-Հայաստան համագործակցության

«Արժանապատիվ աշխատանք» ծրագրի գերակայությունները, սպասվող արդյունքները, դրանց ռազմավարություններն ու ցուցանիշները: Մշակված փաստաթուղթը ներկայացվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կարծիքին: Վերջինս քննարկվել է 27.06.2017թ. ԱՄԿ-ի կողմից կազմակերպված «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի մշակման սեմինարի ընթացքում: Սեմինարի ընթացքում ծավալված քննարկումների արդյունքում ԱՄԿ մասնագետների, ինչպես նաև սոցիալական գործընկերների առաջարկությունների հիման վրա լրամշակվել է «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի նախագիծը և ներկայացվել ԱՄԿ ազգային համակարգողին:

Նշվեց նաև, որ վերոնշյալ սեմինարի ընթացքում քննարկվել է նաև «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի՝ ԱՄԿ կողմից մշակված երկրի իրավիճակի նկարագրին վերաբերող հատվածը: Սեմինարից հետո սոցիալական գործընկերների կողմից ԱՄԿ-ին ներկայացվել են առաջարկներ՝ երկրի իրավիճակի նկարագրին վերաբերող հատվածը լրամշակելու համար:

Տեղեկացվեց նաև, որ փաստաթուղթը դեռևս ամբողջական չէ: Կան քննարկման ենթակա մի շարք խնդիրներ, ինչպես նաև խնդիրների ձևակերպումների հստակեցման անհրաժեշտություն, ինչի համար հարկավոր է կազմակերպել աշխատանքային խմբի հանդիպում:

Նշված ծրագրի մշակման աշխատանքներին անդրադառնալով Բ. Խարատյանի կողմից առաջարկվեց, ծրագրի մշակման աշխատանքներում շտապողականություն չցուցաբերել, քանի որ դրանում ներառված են բավականին լուրջ ու տարբեր տասանկյուններից բազմաթիվ քննարկումներ պահանջող հարցեր, որոնց պետք է հնարավորինս մանրակրկիտ կերպով անդրադառնալ:

Օրակարգի 2-րդ հարցի 2-րդ կետի վերաբերյալ Գ. Մակարյանի կողմից տեղեկացվեց, որ Հայաստանի գործատուների հանրապետական միությունում արդեն սկսել են աշխատել ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների մշակման ուղղությամբ: Իրենց միության հիմնական մոտեցումն այն է, որ միության ներկայացուցիչները ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների մշակման աշխատանքներում ներգրավված լինեն ի սկզբանե:

Օրակարգի 2-րդ հարցի 2-րդ կետի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ՀՀ արդարադատության նախարարի հետ համաձայնություն է ձեռք բերվել ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու աշխատանքներն առարկայացնելու ուղղությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը համապատասխան աշխատանքային խումբ ձևավորելու և ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների աշխատանքներն սկսելու համար: Նախարարի կարծիքով սոցիալական գործընկերները ևս, բնականաբար, պետք է իրենց մասնակցությունն ունենան ձևավորվելիք աշխատանքային խմբում: Հանձնաժողովի նախագահն առաջարկեց ՀՀ արդարադատության նախարարության հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո այդ մասին տեղեկացվի նաև սոցիալական գործընկերներին, որից հետո արդեն կորոշվի ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների հետագա աշխատանքների ընթացքը:

Հանձնաժողովի նախագահի վերոնշյալ առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի անդամների կողմից:

3. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2016 թվականին աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության աշխատանքի անվտանգության նկատմամբ վերահսկողության բաժնի պետ Ա. Մկրտչյանը: Նշվեց.

1. ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 30-ի N 839-Ա որոշմամբ 2015թ. օգոստոսի 1-ից մինչև 2017թ. հուլիսի 1-ը սահմանվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված պետական մարմինների, այդ թվում՝ ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների, իրականացվող ստուգումների բացառիկ դեպքերը, որի արդյունքում 2016թ. Տեսչության կողմից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանման նորմերի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացման նպատակով ստուգումներ չեն իրականացվել:

2. Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի հաշվառման և քննման՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգի պահպանման և օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման ենթակա գումարների ժամանակին վճարման հարցերով Տեսչության կողմից հարուցվել են թվով 9 վարչական վարույթներ: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել են վարչական ակտեր՝ խախտումները վերացնելու վերաբերյալ գրավոր առաջադրանք տալու մասին կարգադրագրեր:

3. Մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Աշխատանքի անվտանգության և աշխատավայրերում աշխատողների առողջության պահպանման ռազմավարությանը և 2016-2018թթ. միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ներկայումս, ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն գտնվում է լրամշակման փուլում:

4. ՀՀ-ում 2016-2018թթ. ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի համաձայն՝ մինչև 18 տարեկան աշխատող երեխաների՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման մասին իրազեկման և աշխատող երեխաներին աշխատանքի վատթարագույն ձևերում ներգրավման կանխարգելման նպատակով, 2016թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ Արագածոտնի, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերի ավագ դպրոցներում Տեսչության աշխատողների կողմից իրականացվել են իրազեկման դասընթացներ:

5. 2016թ. հոկտեմբերին գործատուների և արհեստակցական միությունների համար «2016-2017թթ. առողջ աշխատատեղ՝ բոլոր տարիքների համար» թեմայով կազմակերպվել են սեմինարներ, ինչպես նաև պատասխանվել են աշխատանքի անվտանգության ապահովման և աշխատողների առողջության պահպանման նորմերի կիրարկման վերաբերյալ քաղաքացիներից ստացված դիմումներին:

Միաժամանակ, Տեսչության նպատակների ու խնդիրների, ինչպես նաև դրանք իրագործելու համար Տեսչությանն օրենքով վերապահված լիազորությունների սահմանափակման հետևանքով, աշխատանքից անհիմն ազատելու, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձ չվճարելու, վերջնահաշվարկ չկատարելու

վերաբերյալ ստացված թվով 33 դիմումներ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, վերադարձվել են դիմողներին:

Օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում զեկուցողին հարցեր չներկայացվեցին:

Բ. Խարատյանի կողմից ներկայացվեց հետևյալ դիտարկումը.

Ստեղծված իրավիճակում Տեսչությունը ոչ մի ձևով իր կողմից իրականացվող գործառույթներով չի համապատասխանում ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջներին և ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված հսկողական գործառույթներ չի իրականացվում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը Բ. Խարատյանի դիտարկման կապակցությամբ տեղեկացրեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նամակով դիմել է ՀՀ վարչապետին՝ Տեսչությանը վերաբերող խնդիրների ու հարցադրումների վերաբերյալ և առաջարկել ունենալ համապատասխան քննարկում՝ ՀՀ-ի դիրքորոշումը այդ հարցադրումների վերաբերյալ առավել առարկայական, ամբողջական ձևավորելու համար: Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը միաժամանակ նշեց, որ քննարկման արդյունքների, կամ ըստ անհրաժեշտության քննարմանը մասնակցության վերաբերյալ կողմերին լրացուցիչ կտեղեկացվի:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

3.1. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կողմից 2016 թվականին աշխատանքի ոլորտում իրականացված աշխատանքների մասին ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

4. Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության՝ Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը որպես Հանրային ծառայողի օր ընդունելու առաջարկի քննարկում:

Հանձնաժողովի անդամ Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ 2003 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հունիսի 23-ը հռչակվել է Հանրային ծառայությունների օր, որի նպատակը հանրային ծառայությունների արժեքն ու դերը հանրության շրջանում կարևորելը, երկրների զարգացման գործընթացում ընդգծելն է:

Հաշվի առնելով հանրային ծառայողի առաջնային դերը ինքնիշխան, անկախ, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացման գործում և հիմք ընդունելով միջազգային փորձը՝ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահությունն առաջարկում է ՀՀ-ում հունիսի 23-ը ընդունել որպես հանրային ծառայողի օր: Նման առաջարկը նաև հանրային ծառայողի նկատմամբ հարգանք ձևավորելու նպատակ ունի:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը, կարևորելով նախաձեռնությունը, նշեց, որ այդ քայլով ևս մեկ անգամ հնարավորություն կստեղծվի, որպեսզի կարևորվի հանրային ծառայողի դերն ու նշանակությունը հասարակության մեջ: Հանրային ծառայողը հանրային բարիք ստեղծող է, ում աշխատանքը ուղղված է նոր արդյունքի ստեղծմանը, որը նախատեսված է ողջ հասարակության համար: Սակայն, Հանձնաժողովի նախագահը միաժամանակ հարց ուներ կապված հետևյալի հետ.

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից հունիսի 23-ը հռչակվել է Հանրային ծառայությունների օր, իսկ Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունն առաջարկում է ՀՀ-ում այն ընդունել որպես հանրային ծառայողի օր: Նա ընդգծեց, որ առաջարկը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Հանձնաժողի Նախագահն առաջարկեց, որպեսզի Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից ուսումնասիրվի համապատասխան միջազգային փորձը, ձևակերպվեն հիմնավորումները և ամբողջականացված տեղեկատվությունը ներկայացվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի հիման վրա հնարավոր կլինի կմշակել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ ու ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

Հանձնաժողովի նախագահի վերոնշյալ առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների կողմից:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

4.1. Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության կողմից ուսումնասիրվի համապատասխան միջազգային փորձը, ձևակերպվեն հիմնավորումները և ամբողջականացված տեղեկատվությունը ներկայացվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի հիման վրա հնարավոր կլինի կմշակել ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ ու ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**